

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Բովանդակություն

Նախաբան	3
1. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն.....	4
2. Սակագնային քաղաքականություն	5
3. Գործունեության լիցենզավորում և պայմանագրերի փորձաքննություն	11
4. Կարգավորման իրավական դաշտի զարգացում	12
5. Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի կառուցվածքի բարելավում	15
6. Լիցենզավորված գործունեության մոնիթորինգ և վերահսկողություն.....	16
7. Ներդրումային դաշտի կարգավորում	20
8. Էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի սպառման ծավալների կանխատեսում	23
9. Սպառողների հետ տարվող աշխատանքներ	27
10. Զանգվածային լրատվամիջոցների , հասարակական կազմակերպությունների հետ տարվող աշխատանքներ.....	28
11. Համագործակցություն	29

Նախաբան

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ասուհետև՝ հանձնաժողով) էներգետիկայի բնագավառում, ջրային համակարգում և հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառում կարգավորող մարմին է, որը գործում է ,Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին, էներգետիկայի մասին Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

,Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով հանձնաժողովին վերապահված հեռահաղորդակցության բնագավառի կարգավորման իրավասությունն ուժի մեջ կմտնի առաջին ընթերցմամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հավանությանն արժանացած ,էլեկտրոնային հաղորդակցության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի վեջնական ընդունումից և սահմանված կարգով գործողության մեջ դնելուց հետո:

Հանձնաժողովն ունի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները.

- սակագնային քաղաքականության վարչություն՝
 - ա) սակագնային բաժին,
 - բ) ֆինանսական վերլուծության բաժին,
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն,
- լիցենզավորված գործունեության մոնիթորինգի վարչություն,
- սպառողների հետ կապերի բաժին,
- վարչատնտեսական բաժին:

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

Հանձնաժողովի՝ որպես կարգավորող մարմնի, հիմնական գործառնություններն են.

- ա) էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորում, լիցենզիայի պայմանների սահմանում և դրանց վերահսկում,

- բ) ոչ մրցակցային ջրամատակարարներին ջրային համակարգերի օգտագործման թույլատվության տրամադրում:
- գ) էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև, ինչպես նաև սպառողների հետ կնքվող էներգիայի և (կամ) բնական գազի մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերի կամ պարտադիր պայմանների սահմանում, գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև կնքված, ինչպես նաև էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման և արտահանման պայմանագրերի գրանցում,
- դ) էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի, էներգետիկայի բնագավառում հաղորդման, բաշխման, համակարգի օպերատորի, էլեկտրաէներգետիկական շուկային ծառայությունների մատուցման կարգավորվող սակագների սահմանում,
- ե) ջրամատակարարման համակարգում կարգավորվող սակագների սահմանում,
- զ) էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի մատակարարման ու օգտագործման կանոնների սահմանում,
- է) իր իրավասությունների շրջանակում իրավական ակտերի սահմանում, կիրարկում և մեկնաբանում,
- ը) սպասարկման որակի նկատմամբ ընկերություններին ներկայացվող պահանջների սահմանում և վերահսկում,
- թ) գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից ներկայացվող զարգացման ներդրումային ծրագրերի ուսումնասիրում և սակագներում ներդրումների լրիվ կամ մասնակի ներառման վերաբերյալ որոշումների ընդունում,
- ժ) ընկերությունների գործունեության ֆինանսատնտեսական հաշվետվությունների և տեղեկատվությունների վերլուծություն և արդյունքների գնահատում:

Հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառում, ինչպես վերը նշվեց, հանձնաժողովի գործառույթները կհստակեցվեն ,էլեկտրոնային հաղորդակցության մասին ՀՀ օրենքի ընդունումից հետո:

1. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն

էներգետիկայի բնագավառի և ջրային համակարգի կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը,

հանդիսանալով հանձնաժողովի կարևորագույն գործառնություններից մեկը, հնարավորություն է տալիս ֆինանսական հաշվետվությունների և տեղեկատվությունների հիման վրա գնահատել ընկերությունների, ինչպես նաև ամբողջ էներգետիկայի բնագավառի և ջրային համակարգի ֆինանսական վիճակն ու գործունեության արդյունքները, օժանդակել կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունմանը և, որ ամենագլխավորն է, սակագների սահմանման և վերանայման, ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման, լիցենզիայի պայմանների վերահսկման նպատակով ստեղծել համապատասխան վիճակագրական տվյալների բազա:

Ֆինանսատնտեսական վերլուծության կազմակերպման և կատարելագործման, ֆինանսական վերլուծության նպատակաուղղվածության և արդյունավետության բարձրացման աշխատանքները շարունակական զարգացում կունենան 2005 թվականին:

2004 թվականի հունվարի 1-ից էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների համար հանձնաժողովն արդեն ներդրել է ազգային հաշվային պլանին համապատասխանող հաշիվների և ենթահաշիվների նոր համակարգ, որը հնարավորություն է ընձեռում հստակ տարանջատել հիմնական (լիցենզավորված) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կատարել եկամուտների և ծախսերի մանրամասնած հաշվառում և վերլուծություն:

Էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների ենթահաշիվների նոր համակարգի առանձնահատկություններից ելնելով՝ լրամշակվել և հաստատվել են ֆինանսական հաշվետվության նոր ձևեր:

Նշված աշխատանքներն էապես կնպաստեն կարգավորվող ընկերությունների ծախսերի մոնիթորինգի արդյունավետության բարձրացմանը և առավել հիմնավորված սակագների սահմանմանը:

Հանձնաժողովը մինչև տարեվերջ կավարտի և 2005 թվականի հունվարի 1-ից կարգավորմանը վերաբերող հաշիվների և ենթահաշիվների համակարգը կներդնի նաև գազամատակարարող ընկերություններում: Այս հանգամանքով պայմանավորված՝ 2005 թվականին կվերանայվեն նաև գազամատակարարման համակարգի ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվության ձևերը:

2.Սակագնային քաղաքականություն

Հանձնաժողովը կարգավորում է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և ջրային տնտեսության բնագավառներում գործող սակագները և սպառողներին մատուցվող ծառայությունների համար վճարները, որոնք

սահմանվում են՝ էլեկտրոլ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքից: Սահմանված սակագները (ծառայության վճարները) պետք է ապահովեն.

- կարգավորվող ընկերության հուսալի և անվտանգ գործունեության համար անհրաժեշտ շահագործման և պահպանման ծախսերի իրականացումը,
- հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածության փոխհատուցումը,
- ներգրավված կապիտալի դիմաց ողջամիտ շահույթի ստացումը:

2004 թվականի ընթացքում ուսումնասիրվել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից առաքվող էլեկտրաէներգիայի (հզորության) սակագների վերանայման հայտը: Հաշվի առնելով, որ ատոմային էլեկտրակայանն աշխատում է բավական հաստատուն հզորությամբ, որոշվել է՝ պահպանելով երկդրույք սակագնային համակարգը, հզորության համար սահմանել հաստատագրված ամսական վճար: Սահմանվել են առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 3.056 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և հզորության ամսական վճարը՝ 624.43 մլն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի: Արդյունքում՝ միադրույք հաշվարկային սակագինը կազմում է 6.37 դրամ/կՎտժ՝ նախկին 5.972 դրամ/կՎտժ-ի փոխարեն: Սակագնի աճը պայմանավորված է նախկինում ներկրված վառելիքի դիմաց պարտքերի մարման համար ներգրավված վարկային միջոցների սպասարկմանը և անվտանգության բարձրացման միջոցառումներին ուղղված ծախսերի ներառմամբ:

Հանրապետությունում բնական ջրահոսքերի վրա նոր փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման նախագծային աշխատանքների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործող 3,0 ԱՄՆ ցենտ/կՎտժ սահմանային սակագինը (առանց ավելացված արժեքի հարկի) խոչընդոտում է խոշոր ներդրումներ պահանջող այս ոլորտում կապիտալի ներգրավմանը: Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով տեղական էներգետիկական պաշարների արդյունավետ օգտագործման սկզբունքները և նպատակ ունենալով խրախուսել էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործման ոլորտում տեղական և արտասահմանյան ներդրումների ներգրավումը, ընթացիկ տարվա սկզբում հանձնաժողովը սահմանել է մինչև 2016 թվականի ապրիլի 1-ը էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստացող անձանց կողմից բնական ջրահոսքերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի 4.5 ԱՄՆ ցենտ/կՎտժ-ին համարժեք դրամ սակագին՝ առանց ավելացված արժեքի հարկի: Այս որոշումը հնարավոր ներդրողների համար բարենպաստ է նաև այն առումով, որ վերանում են սակագների հաշվարկման հետ կապված կարգավորման ռիսկերը:

Որոշման ընդունումից հետո որոշակի աշխուժություն է նկատվում փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման լիցենզիա ստանալու գործընթացում: Անցած յոթ ամիսների ընթացքում հանձնաժողովը տրամադրել է 10 փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման լիցենզիաներ՝ 24 ՄՎտ ընդհանուր դրվածքային հզորությամբ և էլեկտրաէներգիայի 86,4 մլն կՎտժ տարեկան միջին արտադրանքով: Դրանցից 7-ը՝ 21.7 ՄՎտ դրվածքային հզորությամբ, տեղակայվելու են բնական ջրահոսքերի վրա, որոնց էլեկտրաէներգիայի արտադրանքը կկազմի 73.6 մլն կՎտժ: Համեմատության համար նշենք, որ այդ հիդրոէլեկտրակայանների կառուցումից հետո ներկայումս գործող փոքր հիդրոէլեկտրակայանների ընդհանուր դրվածքային հզորությունը կաճի շուրջ 52%-ով, իսկ էլեկտրաէներգիայի միջին տարեկան արտադրանքը՝ 66%-ով:

2005 թվականին հանձնաժողովը կշարունակի ակտիվ մասնակցություն ունենալ և աջակցել հանրապետությունում հիդրոէներգետիկայի զարգացումը խթանող նոր մոտեցումների և մեխանիզմների մշակմանն ու ներդրմանը, մասնավորապես, մարզերում հիդրոէներգետիկայի զարգացման համալիր ծրագրերի մշակմանը և իրագործմանը:

Հանձնաժողովի գործուն աջակցությամբ Լոռու մարզպետարանի կողմից արդեն մշակվել և Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն է արժանացել մարզի փոքր հիդրոէներգետիկայի զարգացման ծրագիրը: Ծրագրի իրագործման ընթացքում կկիրառվի սկզբունքորեն նոր մոտեցում՝ ներդրողներին մրցույթով կտրամադրվի հիդրոէլեկտրակայանի (հիդրոէլեկտրակայանների) կառուցումն սկսելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջական փաթեթը՝ հողահատկացման և ջրօգտագործման թույլատվությունները, հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական հիմնավորումը, կառուցման լիցենզիան և այլ փաստաթղթեր: Ներկայումս բանակցություններ են ընթանում ծրագրի իրագործմանը միջազգային ֆինանսական կազմակերպություններին մասնակից դարձնելու ուղղությամբ:

Լոռու մարզում նշված ծրագրի հաջող իրագործումը կխթանի հիդրոէներգետիկայի զարգացման հեռանկար ունեցող այլ մարզերի համար ևս համանման ծրագրերի մշակումը և իրագործումը:

Ընթացիկ տարում հանձնաժողովը վերանայել է երկու փոքր հիդրոէլեկտրակայաններից («Էներգատեխնիկա» ՍՊԸ-ի և «Շինարար» արտադրական կոոպերատիվի «Ամրակից-1» և «Ամրակից-2») առաքվող էլեկտրական էներգիայի սակագները: Սահմանվել են «Բազենք» ՓԲԸ-ի «Եղեգիս-1», «Լեռ և ջուր» ՍՊԸ-ի «Արջուտ-2» բնական ջրահոսքերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններից, ինչպես նաև «Նարէներգո» ՍՊԸ-ի «Գառնի» փոքր հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Նախատեսվում է մինչև 2005 թվականի վերջը սահմանել 13 և վերանայել 2 փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագներ:

Հաշվի առնելով հողմապաշարագիտական բազմամյա հետազոտությունների արդյունքները, ինչպես նաև հանրապետության էներգիայի այլընտրանքային աղբյուրների արդյունավետ օգտագործման, հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման և էներգետիկայի բնագավառում ներդրումների խրախուսման նպատակով, հանձնաժողովը 2004 թվականին սահմանել է հողմային էլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի 7,0 ԱՄՆ ցենտ/կՎտժ-ին համարժեք դրամ սակագին՝ առանց ավելացված արժեքի հարկի, նախկինում սահմանված 5,0 ԱՄՆ ցենտ/կՎտժ-ի փոխարեն:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզավորված գործունեություն իրականացնելու պայմանների համաձայն՝ սակագնային մարժան հաշվարկվում է հանձնաժողովի կողմից հաստատված մեթոդաբանությամբ, ըստ որի՝ եթե 2004 թվականին 1 կՎտժ-ի համար մարժան չէր կարող փոքր լինել 1.5 ԱՄՆ ցենտին համարժեք դրամից՝ առանց ավելացված արժեքի հարկի, ապա սկսած 2005 թվականից նման սահմանափակում չի գործելու, և սակագնային մարժայի հաշվարկն իրականացվելու է նշված մեթոդաբանությամբ ամրագրված սկզբունքների և ցուցանիշների հիման վրա: Մասնավորապես, 2005 թվականին սակագնային մարժայի հաշվարկում էլեկտրաէներգիայի թույլատրելի կորուստները հաշվի կառնվեն 15%-ի չափով, ակտիվների շահութաբերության հաշվարկային նորման շահույթի հաշվարկման բազայի նկատմամբ կպահպանվի 17%, մաշվածությունը կհաշվարկվի գծային եղանակով՝ մասնավորեցման մրցույթի արդյունքում ձևավորված հիմնական ակտիվների նկատմամբ՝ 10%, իսկ հետագա ներդրումների հաշվին ստեղծված հիմնական ակտիվների արժեքի նկատմամբ՝ 4%:

Ուսումնասիրության փուլում է գտնվում «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական շուկային ծառայությունների մատուցման սակագնի վերանայման հայտը:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» և «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ները նույնպես նախապատրաստվում են սակագների վերանայման հայտով այս տարվա ընթացքում դիմել հանձնաժողով:

Նախատեսվում է գույքի փոխանցման աշխատանքների ավարտից հետո վերանայել «Հրազդանի ԶԷԿ» ՓԲԸ-ից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագինը: Համաձայն Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կառավարությունների միջև կնքված համաձայնագրի, անհրաժեշտ է սահմանել սակագնի այնպիսի մակարդակ, որը թույլ կտա ապահովել գույքային

համալիրի ձեռքբերման արժեքի՝ 31 մլն ԱՄՆ դոլարի, վերադարձը ոչ ուշ, քան 15 տարվա ընթացքում:

2004 թվականի սկզբում վերանայվել են «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող բնական գազի, գազամատակարարման համակարգի փոխադրման և բաշխման, ինչպես նաև համակարգի օպերատորի լիցենզավորված գործունեություն իրականացնող ընկերությունների համար ծառայությունների մատուցման սակագները:

Նպատակ ունենալով խթանել ջեռուցման ապակենտրոնացված մասնավոր համակարգերի զարգացումը, «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ և լրացումներ, համաձայն որոնց ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման գործունեությունները չեն կարգավորվում (չեն լիցենզավորվում և սակագներ չեն սահմանվում), եթե այդ համակարգերի դրվածքային հզորությունը չի գերազանցում 5.8 ՄՎտ-ն:

2004 թվականին հանձնաժողովը զգալի աշխատանք է կատարել նաև ջրային համակարգի կարգավորվող ընկերությունների սակագների սահմանման ուղղությամբ: Վերանայվել են Երևանի «Ջրնուղ-կոյուղի», «Հայջրնուղկոյուղի» և «Նոր ակունք» ՓԲԸ-ների կողմից սպառողներին վաճառվող խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագները, ինչպես նաև Երևանի «Ջրնուղ-կոյուղի» ՓԲԸ-ի կողմից «Հայջրնուղկոյուղի» ՓԲԸ-ին վաճառվող խմելու ջրի մատակարարման մեծածախ սակագինը:

Սակագների վերանայումը պայմանավորված է եղել ընկերությունների ֆինանսական կենսունակությունն ապահովելու նպատակով գործող սակագները ծախսածածկման մակարդակին հասցնելու անհրաժեշտությամբ, հաշվառման համակարգի բարելավման և ջրաչափերի տեղադրման հետևանքով սպառման ծավալների կտրուկ նվազմամբ և համակարգի անխափան շահագործման, անվտանգության բարձրացման, ինչպես նաև մատուցվող ծառայությունների որակի աստիճանական բարելավման հետ կապված ուղղակի ծախսերի ավելացմամբ:

«Ոռոգում-ջրառ» ՓԲԸ-ի «Սևան-Հրազդանյան ջրառ», «Ախուրյան-Արաքսի ջրառ», «Որոտան-Արփայի ջրառ» և «Դեբեդ-Աղստևի ջրառ» մասնաձյուղերի սպասարկման տարածքում գտնվող ջրօգտագործողների ընկերություններին, ջրօգտագործողների ընկերությունների միություններին և այլ ջրօգտագործողներին վաճառվող ինքնահոս և մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի սակագները սահմանվել են գետավազանային սկզբունքով: Սակագների վերանայումը պայմանավորված էր՝

- ընկերությունում տեղի ունեցած կառուցվածքային փոփոխություններով, շահագործվող հիմնական միջոցների ավելացմամբ, իրավասությունների

շրջանակների ընդլայնմամբ, ինչպես նաև սպառողների հետ հարաբերությունների առևտրայնացման գործընթացի խորացմամբ.

- ֆինանսական կենսունակությունն ապահովելու նպատակով գործող սակագների ծախսածածկման մակարդակին հասցնելու անհրաժեշտությամբ.
- հաշվառման համակարգի բարելավման, անխափան աշխատանքի ապահովման, անվտանգության և մատուցվող ծառայությունների որակի բարձրացման հետ կապված շահագործման ծախսերի աճով:

Հանրապետության ջրային տնտեսության բնագավառում իրականացվող բարեփոխումների համատեքստում կարևորվում և հրատապ լուծում է պահանջում ինքնածախսածակող սակագների աստիճանաբար կիրառումը: Այդ առումով առանձնապես կարևորվում է սակագնային հիմնավորված քաղաքականության իրականացումը, որը պետք է հիմնված լինի տնտեսական արդյունավետության բարձրացման, ֆինանսական առողջացման և շրջակա միջավայրի պահպանության պահանջների ապահովման վրա: Ջրային տնտեսության բնագավառում սակագնային քաղաքականության հստակեցման և սակագների սահմանման, ինչպես նաև ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերլուծության նպատակով հանձնաժողովը 2004 թվականին հաստատել է Հայաստանի Հանրապետության ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող անձանց գործունեության սակագների սահմանման ու վերանայման գործընթացը կարգավորող և նրանց կողմից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների և տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ներկայացման կարգերը և ձևերը:

Ջրային տնտեսության բնագավառում իրականացվող բարեփոխումների շրջանակներում, համաձայն ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների հիմնադրման գործում Հայաստանի Հանրապետության մասնակցության պայմանների մասին» N 573Ն որոշման, նախատեսվում է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կազմից տարանջատել «Լոռի» և «Շիրակ» մասնաձյուղերը՝ ստեղծելով առանձին ընկերություններ, որի հետևանքով անհրաժեշտություն կառաջանա սահմանել այդ ընկերությունների կողմից սպառողներին վաճառվող խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայության մատուցման սակագները: Հաշվի առնելով վերը նշվածը և այն, որ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրային համակարգի օգտագործման իրավունքը փոխանցվել է մասնավոր կառավարչին՝ մրցույթում հաղթող ճանաչված ֆրանսիական «ՍԱՈՒՐ ԷՍ ԷՅ» կազմակերպությանը, 2005 թվականի ընթացքում կվերանայվեն նաև «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սակագները:

2005 թվականին Երևանի «Ջրնուղ-կոյուղի» ՓԲԸ-ի ջրային համակարգի օգտագործման իրավունքի ձևի (վարձակալության կամ կոնցեսիայի պայմանագրով) նախատեսվող փոփոխության հետ կապված՝ անհրաժեշտություն կառաջանա վերանայել նաև ընկերության կողմից սպառողներին առաքվող խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայության մատուցման սակագները:

Ջրային տնտեսության բնագավառում ընկերությունների կողմից շահագործվող համակարգերի արդիականացման, մաշված և վթարային վիճակում գտնվող խողովակաշարերի փոխարինման, հիդրոտեխնիկական կառուցվածքների վերականգնման, հաշվառման համակարգի կատարելագործման համար շարունակվում են ներգրավվել արտոնյալ վարկային միջոցներ Համաշխարհային բանկից, Գերմանիայի կառավարության KfW բանկից և այլ դոնոր կազմակերպություններից:

2005 թվականին կշարունակվեն 2004 թվականին սկսված՝ կարգավորվող ընկերությունների սակագների սահմանման մեթոդաբանության հետագա հստակեցման և նոր մեթոդիկաների մշակման աշխատանքները:

Հանձնաժողովը 2004 թվականին մշակել և հաստատել է ջեռուցման նպատակով օգտագործվող ջերմային էներգիայի սակագնի հաշվարկման մեթոդիկան, որը սահմանում է կենտրոնացված ջերմամատակարարման համակարգերի կողմից ջեռուցման նպատակով ջերմային էներգիայի մատակարարման սակագնի հաշվարկման սկզբունքներն ու մեխանիզմները:

Արդեն մշակվել և քննարկման փուլում է բնական գազի մատակարարման համակարգում սակագների հաշվարկման մեթոդիկան, որը նախատեսվում է հաստատել և գործողության մեջ դնել ընթացիկ տարում: Նշված մեթոդիկայով կսահմանվեն համակարգում գործող ընկերությունների կողմից մատուցվող՝ տեղափոխման, պահեստավորման, կարգավարման ծառայությունների, ինչպես նաև բնական գազի վերջնական սպառողներին գազամատակարարման ծառայությունների մատուցման սակագների սահմանման սկզբունքներն ու մեխանիզմները:

Մշակվել է և շահագրգիռ կազմակերպությունների հետ քննարկելուց հետո 2004 թվականին կհաստատվի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագների հաշվարկման մեթոդիկան:

2005 թվականին նախատեսվում է մշակել և հաստատել էլեկտրակայաններից առաքվող էլեկտրաէներգիայի, բարձրավոլտ էլեկտրացանցերի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգին մատուցվող ծառայությունների, ինչպես նաև էլեկտրաէներգիայի մանրածախ սակագների հաշվարկման նոր մեթոդիկաները:

2005 թվականին նախատեսվում է մշակել նաև ոռոգման ջրի սակագների հաշվարկման մեթոդիկան:

Նշված մեթոդիկաները կնպաստեն առավել հստակ ու թափանցիկ դարձնելու հանձնաժողովի կողմից վարվող սակագնային քաղաքականությունը և ավելի արդարացի ու տնտեսապես հիմնավորված՝ սակագնային համակարգը:

3. Գործունեության լիցենզավորում և պայմանագրերի փորձաքննություն

2004 թվականի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում հանձնաժողովը տրամադրել է գործունեության 14 լիցենզիա, որոնցից 10-ը՝ փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման, երեքը՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության և մեկը՝ էլեկտրական էներգիայի արտահանման՝ ապահովելով է 157,079 մլն դրամ տարեկան լիցենզիոն տուրքերի գանձում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ 2004 թվականի ընթացքում տարեկան լիցենզիոն տուրքերի մասով նախատեսվում է ապահովել մոտ 188,0 մլն դրամ գանձում:

2005 թվականին շարունակվելու է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեության լիցենզավորումն ու թույլտվությունների տրամադրումը:

2004 թվականի սկզբից մինչև սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում հանձնաժողովը փորձաքննության է ենթարկել և գրանցել լիցենզավորված անձանց միջև կնքված 79 պայմանագրեր:

4. Կարգավորման իրավական դաշտի զարգացում

2003 թվականի դեկտեմբերի 25-ին ընդունված «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով ընդլայնվել է կարգավորող մարմնի գործառնությունների շրջանակը՝ ներառելով նաև ջրային տնտեսության, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառները: Նկատի ունենալով, որ «էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումից հետո իրականացնելու է նաև հեռահաղորդակցության բնագավառի կարգավորումը, հանձնաժողովն արդեն

ծեռնամուխ է եղել, իսկ 2005 թվականին կշարունակի աշխատել այնպիսի իրավական դաշտի ստեղծման ուղղությամբ, որով կապահովվի սպառողներին մատուցվող ծառայությունների՝ գների և որակի առումով առավել մատչելիությունը և կխրախուսվեն ոլորտում արդյունավետ ներդրումները: Օգտագործելով միջազգային փորձը և համագործակցելով միջազգային խորհրդատվական կազմակերպությունների հետ, հանձնաժողովում արդեն մշակվում են հանրային հաղորդակցության ցանցերի գործունեության և էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների կարգավորման չափանիշներն ու ընթացակարգերը:

2005 թվականին, շարունակելով սկսված աշխատանքները, հանձնաժողովը կմշակի մատուցվող ծառայությունների դրույքաչափերը կարգավորող կանոններ, էլեկտրոնային հաղորդակցության օպերատորների, սպառողների և ծառայություն մատուցողների միջև առաջացած վեճերի լուծման համար կազմակերպվող լսումների ընթացակարգեր և «էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ փաստաթղթեր: Հաշվի առնելով ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 19-ի N 364Ն որոշմամբ «ԱրմենՏել» համատեղ ձեռնարկությանը տրամադրված N60 լիցենզիայի պայմաններում կատարված փոփոխությունները, հանձնաժողովը կմշակի նաև հանրային շարժական կապի ծառայություններ մատուցող օպերատորներին տրվող լիցենզիաների պայմանները, ինչպես նաև էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում գործող օպերատորների ցանցերի փոխկապակցման պայմանները:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի պահանջի կատարումն ապահովելու նպատակով 2004 թվականին հանձնաժողովն ակտիվ մասնակցություն է ունեցել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից «Կարգավորման պարտադիր վճարների հաշվարկման և գանձման կարգի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման աշխատանքներին, որը սահմանված կարգով ներկայացվել է Ազգային ժողովի քննարկմանը:

Շարունակելով իրավական ակտերի կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքները, հանձնաժողովը ներկայումս ձեռնամուխ է եղել ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկությունների մշակմանը: Էներգետիկայի բնագավառի կարգավորման փորձը հանձնաժողովին թույլ կտա առավել արդյունավետ իրականացնելու կարգավորման գործառույթը ջրային համակարգում: Մասնավորապես, ջրային համակարգի օգտագործման թույլտվությունների փոխարեն առաջարկվում է լիցենզիաների տրամադրում, որոնց պայմանները սահմանում է հանձնաժողովը: Բացի այդ, անհրաժեշտ է սահմանել ջրային համակարգում իրականացվող գործունեության բոլոր հնարավոր տեսակները, ինչպես նաև սահմանել

գործունեության այն տեսակները, որոնց իրականացման համար լիցենզիաներ չեն տրամադրվի:

Կարևորում ենք ջրային օրենսգրքում մատակարար-սպառող հարաբերությունները կարգավորող հիմնադրույթների ամրագրումը առանձին հոդվածի տեսքով, որին պետք է համապատասխանեցվեն մյուս իրավական ակտերը և պայմանագրերը:

Ելնելով սպառողների և կարգավորվող անձանց շահերի հավասարակշռման և մեկ միասնական մարմնի կողմից կարգավորման իրականացման իրողությունից, անհրաժեշտ ենք համարում ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրերի օրինակելի ձևերի սահմանման իրավասությունը փոխանցել հանձնաժողովին:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ հանձնաժողովը սահմանում է սպառողներին մատակարարվող ջրի սակագները, առաջիկայում կսահմանի նաև ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրերի օրինակելի ձևերը, մատակար-սպառող հարաբերությունների լիարժեք կարգավորման համար հանձնաժողովը պետք է սահմանի նաև ջրամատակարարման և ջրահեռացման կանոնները:

Գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից լիցենզիայի պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու փաստերին օպերատիվ արձագանքելու համար հանձնաժողովը պետք է ունենա տույժեր կիրառելու և խախտումները վերացնելու հանձնարարականներ տալու լիազորություններ: Մինչդեռ ջրային օրենսգրքով սահմանված են միայն թույլտվության կասեցում և զրկում, հստակ չնշելով, թե որ մարմնին են վերապահվում այդ լիազորությունները:

Ելնելով մեկ միասնական մարմնի կողմից կարգավորման իրականացման դրույթից, ՀՀ ջրային օրենսգրքում պետք է ամրագրել առանձին հոդված՝ ջրային համակարգում գործունեության լիցենզիա ստանալու հայտի քննարկման և գործունեության լիցենզիայի տրման կարգն ու պայմանները հանձնաժողովի կողմից սահմանելու վերաբերյալ: Անհրաժեշտ է նաև սահմանել լիցենզիայի տրամադրման գործընթացի առավելագույն ժամկետ:

Ջրային ոլորտում անհրաժեշտ է սահմանել հուսալիության երաշխիքներ պահանջող գործունեության տեսակները, այդ երաշխիքների չափերը և դրանց ներկայացման կարգը:

Առաջարկվում է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի համանմանությամբ ՀՀ ջրային օրենսգրքում ևս հստակ ամրագրել հանձնաժողովի համապատասխան իրավասությունների շրջանակը, ինչպես նաև ոչ մրցակցային ջրամատակարարման համակարգերի օգտագործման թույլատվություն ունեցող անձանց սեփականության իրավունքի փոխանցման սահմանափակման դեպքերն ու պայմանները:

2005 թվականին կմշակվեն նաև այլ առաջարկություններ ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու օրենքի նախագծի վերաբերյալ:

Ջրային համակարգի կարգավորման իրավական դաշտի բարելավման ուղղությամբ 2005 թվականին նախատեսվում է կատարել նաև հետևյալ աշխատանքները.

- ա) ՀՀ ջրային օրենսգրքով նախատեսված կարգերի մշակում և սահմանում,
- բ) ոչ մրցակցային ջրամատակարարներին տրամադրվելիք ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների ձևերի և դրանց գործունեության պայմանների օրինակելի ձևերի սահմանում,
- գ) ոչ մրցակցային ջրամատակարարներին ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների տրամադրում,
- դ) ջրային համակարգի պայմանագրերի օրինակելի ձևերի մշակում:

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո հանձնաժողովում կիրականացվի կառուցվածքային փոփոխություն, ինչը ենթադրում է աշխատակազմի թվաքանակի ավելացման նպատակով քաղաքացիական ծառայության նոր պաշտոնների անձնագրերի մշակում և հաստատում, ինչպես նաև «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքին համապատասխան ստեղծված պաշտոնների համար մրցույթների անցկացում:

5. Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի կառուցվածքի բարելավում

2005 թվականին կշարունակվեն էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի կառուցվածքի բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները:

2004 թվականի հոկտեմբերի 1-ից էլեկտրաէներգիա արտադրող կայանները և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն կանցնեն ուղիղ պայմանագրային հարաբերությունների՝ դադարեցնելով «Հայէներգո» ՓԲԸ-ի անարդյունավետ միջնորդությունը էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում: Այս տարի արդեն լուրջ քայլեր են ձեռնարկվել էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի կառուցվածքի բարեփոխման ուղղությամբ: Համակարգի հուսալիության և անվտանգության բարձրացման նպատակով «Հայէներգո» ՓԲԸ-ից առանձնացվել է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ն, որին վերապահվել են համակարգի կարգավորման իրավասությունները: Ուղիղ պայմանագրային հարաբերությունների ներդրումն ապահովելու համար հանձնաժողովը մշակել և հաստատել է մի շարք առաջնահերթ նորմատիվ իրավական ակտեր: Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի կառուցվածքի այս

փոփոխությունների նպատակը համակարգի ֆինանսական հոսքերի առավել թափանցիկության, էլեկտրաէներգիա արտադրող և շուկային ծառայություններ մատուցող ընկերությունների ֆինանսական կայունության ապահովման նախադրյալների ստեղծումն է:

Շուկայի նոր կառուցվածքի ներդրմամբ պայմանավորված՝ մեծանում են «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ֆինանսական ռիսկերը՝ կապված էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքի կանխատեսվածից կտրուկ տատանումների և կարգավորման դաշտի այլ ռիսկերի հետ, որոնք մեծաձախ շուկայի նախկին կառուցվածքում կրում էր «Հայէներգո» ՓԲԸ-ն: «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի՝ որպես մասնավոր ընկերության, ռիսկերը և դրանցով պայմանավորված հնարավոր վնասները նվազագույնի հասցնելու կամ բացառելու նպատակով հանձնաժողովը մշակում է համապատասխան օրենքի նախագիծ, որը ՀՀ կառավարությունը կներկայացնի Ազգային ժողովի քննարկմանը: Այդ օրենքի ընդունումից հետո հանձնաժողովը կմշակի և կընդունի համապատասխան իրավական ակտեր, որոնք կապահովեն նշված կարևորագույն խնդրի լուծումը:

Շուկայի նոր կառուցվածքի արդյունավետ գործունեության ապահովման համար 2005 թվականին կշարունակվեն նոր կանոնների ու կարգերի մշակման և գործող իրավական փաստաթղթերում անհրաժեշտ փոփոխությունների կատարման աշխատանքները:

6. Լիցենզավորված գործունեության մոնիթորինգ և վերահսկողություն

Համաձայն «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» և «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքների, հանձնաժողովի հիմնական գործառնություններից մեկը էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց լիցենզիաների պայմանների կատարման վերահսկումն է, որն ուղղված է այդ ընկերությունների գործունեության պարբերաբար ուսումնասիրությունների և համապատասխան վերլուծությունների արդյունքում թերությունների՝ լիցենզիայի պայմանների ոչ պատշաճ կատարման կամ խախտումների հայտնաբերմանը և դրանց վերացման նպատակով միջոցառումների և մեխանիզմների մշակմանն ու իրականացման ապահովմանը:

Այս առումով 2004 թվականի ընթացքում մոնիթորինգ է իրականացվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում՝ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների և ենթասպառողների էլեկտրամատակարարման ապահովման համար տրվող փոհատուցումների առկա վիճակի ուսումնասիրության ուղղությամբ: Մոնիթորինգի արդյունքում մասնավորապես պարզվել է, որ սպառողների

սպասարկման որակի ցուցանիշները սահմանելու համար անհրաժեշտ տեղեկատվական բազան ամբողջական չէ՝ թերի է էլեկտրամատակարարման և շահագործվող սարքավորումների հուսալիության փաստացի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը: Թերությունը շտկելու նպատակով ընկերությանն առաջարկվել է էլեկտրամատակարարման և սարքավորումների հուսալիության հաշվարկի ու հաշվառման մեթոդաբանություն, որը հնարավորություն կընձեռի սպասարկման որակի ցուցանիշները սահմանելու համար ունենալ բավարար ծավալի տեղեկատվական բազա:

«Հայաստանի ատոմային էլեկտրակայան» և «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ներում իրականացված մոնիթորինգն ուղղված է եղել արտադրված էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման ընթացքում հանձնաժողովի կողմից հաստատված հաշվառման կարգի պահանջների կատարմանը: Ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է ընկերությունների և մեծածախ գնորդ-վաճառողի պայմանագրերում ամրագրված առևտրային հաշվառքի կետերի անհամապատասխանություն հաշվառման կարգի պահանջներին, որը հետագայում կարգավորվել է:

Երևանի «Ջրնուղ-կոյուղի» ՓԲԸ-ում իրականացված մոնիթորինգի արդյունքում հայտնաբերվել են մի շարք թերացումներ 2004 թվականի ապրիլի 30-ին հանձնաժողովի սահմանած կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների կատարման ուղղությամբ: Մասնավորապես, արձանագրվել են ջրամատակարարման հրապարակված գրաֆիկներից շեղման, նվազագույն 4-ժամյա ջրամատակարարման պահանջի խախտման դեպքեր: Հանձնաժողովում կազմակերպված քննարկումների արդյունքում ընկերությանը հանձնարարվել է մշակել և իրականացնել սահմանված նվազագույն պահանջների կատարմանն ուղղված կազմակերպչական և տեխնիկական միջոցառումներ:

2005 թվականին կշարունակվեն լիցենզավորված անձանց գործունեության մոնիթորինգն ու վերահսկողությունը, որոնք ուղղված կլինեն նաև կատարված և նախատեսվող ներդրումների արդյունավետության, շահագործման և պահպանման անհրաժեշտ ծախսերի հիմնավորվածության գնահատմանը: Ելնելով նոր տեղակայված էներգակայանքների տեխնիկական և որակական ցուցանիշներից, համեմատական վերլուծության կենթարկվեն լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ հզորությունների ապահովմանն ուղղված շահագործման ծախսերը և տեխնիկական անխուսափելի կորուստների մեծությունները:

Հանձնաժողովը կվերահսկի նաև լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորված գործունեության իրականացման ընթացքում անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանման, սպառողների սպասարկման որակի

ապահովման գործընթացները, ինչպես նաև սպասարկող անձնակազմի կյանքի և առողջության պահպանման պայմանները:

2005 թվականին նախատեսվում է ձևավորել էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց առկա էներգակայանքների տեխնիկական վիճակը բնութագրող էներգամատակարարման հուսալիության ցուցանիշների տեղեկատվական բազա: Պարբերաբար վերլուծելով ստացված տեղեկատվությունը, հանձնաժողովը կշարունակի ուշադրության կենտրոնում պահել լիցենզավորված անձանց կողմից սպառողներին մատուցվող ծառայություններին և սպասարկման որակի ցուցանիշներին ներկայացվող պահանջների պահպանումը՝ բացառելու համար էլեկտրական, ջերմային էներգիական բնական գազ մատակարարող ընկերությունների հնարավոր կամայականությունները սպառողների նկատմամբ և հետևելով, որ մատակարար-սպառող հարաբերությունները կառուցվեն գործող իրավական դաշտի շրջանակում: Լիցենզավորված ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների վերլուծության արդյունքում կգնահատվի դրանց համապատասխանությունը լիցենզիաների պայմաններին և, անհրաժեշտության դեպքում, համապատասխան միջոցներ կծեռնարկվեն էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի չհիմնավորված ընդհատումների կանխման ուղղությամբ:

2005 թվականին հանձնաժողովը կշարունակի հետևել լիցենզավորված անձանց կողմից սպառողների բողոքներին արձագանքելու ընթացքին՝ անհրաժեշտության դեպքում միջամտելու և դրանցում բարձրացված հարցերին իրավական դաշտում լուծում տալու նպատակով: Սպառողների բարձրացրած հարցերը քննարկելու և դրանց համապատասխան լուծումներ տալու նպատակով հանձնաժողովը կշարունակի հասարակական լսումների ինստիտուտի կիրառումը, այդ մասին իրազեկելով հասարակական կազմակերպություններին, իսկ հասարակական հնչեղություն ունեցող խնդիրների առկայության դեպքում՝ նաև զանգվածային լրատվամիջոցներին:

Առավել մեծ ուշադրություն կդարձվի մատակարարված էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի համապատասխան որակը չապահովելու պատճառով սպառողներին հասցված վնասը մատակարարների կողմից փոխհատուցելու խնդրին:

Հատուկ վերահսկողություն կիրականացվի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից լիցենզիաների պայմաններով նախատեսված՝ էլեկտրաէներգիայի և բնական գազի բաշխիչ ցանցերի կառավարման, կարգավարման, շահագործման բարելավման և նոր սպառողների էլեկտրամատակարարման ու գազամատակարարման

նպատակով բաշխիչ ցանցերի ընդլայնման գործառույթների իրականացման նկատմամբ:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի գործունեության մոնիթորինգի ընթացքում կվերահսկվեն բնական գազի ներկրման, փոխադրման (ներառյալ՝ պահեստավորման) և տարանցման հուսալիությունն ու անվտանգությունը, գազիֆիկացման ու գազամատակարարման վերականգնման ընթացքում ընկերության գործունեության համապատասխանությունը ՀՀ կառավարության և հանձնաժողովի որոշումներին, ինչպես նաև անվտանգության և բնապահպանության նորմերի պահանջների կատարման ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

2005 թվականի ընթացքում կվերահսկվի հանձնաժողովի համաձայնությունն ստացած՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ների երկարաժամկետ և կարճաժամկետ ներդրումային ծրագրերի իրագործման ընթացքը:

Կվերահսկվի նաև էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի կողմից համակարգի անվտանգության և հուսալիության ցուցանիշների կատարման ընթացքը՝ հետևելով միաժամանակ համակարգի պլանավորման և կարգավարման գործընթացներին:

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում, հանձնաժողովը 2004 թվականի ապրիլի 30-ի և հունիսի 1-ի համապատասխան որոշումներով հաստատել է Երևանի «Ջրմուղ-կոյուղի» և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջները: Այդ պահանջների կատարումը վերահսկելու նպատակով մոնիթորինգ է իրականացվել Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ում, որի ընթացքում ուսումնասիրվել են ընկերության լաբորատորիաներում խմելու ջրի որակի ստուգման կարգի, ջրամատակարարման հաստատված գրաֆիկների առկայությունը և վերջիններիս համապատասխանությունը իրականությանը: Ուսումնասիրվել են նաև ջրամատակարարման գրաֆիկների և դրանցում կատարվող փոփոխությունների մասին սպառողներին իրազեկման գործընթացը, սպառողներից ստացված ահազանգերի, բողոքների, հարցադրումների հաշվառումը, դրանց համապատասխան ընթացք տալու համար անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի ու առանձնատների մուտքագծերում խմելու ջրի ճնշման համապատասխանությունը սահմանված պահանջներին: Մոնիթորինգի արդյունքները քննարկվել են ընկերության հետ համատեղ, և վերջինս պարտավորվել է ամենասեղմ ժամկետում շտկել հայտնաբերված թերությունները:

2005 թվականին հանձնաժողովը կշարունակի վերահսկել Երևանի «Ջրնուղ-կոյուղի» և «Հայջրնուղկոյուղի» ՓԲԸ-ների կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների և, առաջին հերթին, ջրամատակարարման գրաֆիկների և խմելու ջրի համակարգում համապատասխան ճնշման պահպանման պահանջների կատարումը:

Հանձնաժողովը 2004 թվականի ապրիլի 30-ի համապատասխան որոշմամբ պարտավորեցրել էր Երևանի «Ջրնուղ-կոյուղի» ՓԲԸ-ին Երևանի որոշ փողոցների և ընկերության սպասարկման տարածքում գտնվող գյուղական համայնքների ջրամատակարարումը 2005 թվականի հունվարի 1-ից իրականացնել օրական առնվազն չորսժամյա գրաֆիկով: Սոնիթորինգի ընթացքում հատկապես ուշադրություն է դարձվելու այս որոշման կատարման ընթացքին, ինչպես նաև «Հայջրնուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության կողմից հանձնաժողով ներկայացվելիք՝ սպառողների ջրամատակարարման սպասարկման որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների (այդ թվում՝ ներդրումային ծրագրերի) իրականացմանը:

Ելնելով մոնիթորինգի արդյունքներից, հանձնաժողովը պարբերաբար կվերանայի խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջները՝ հիմնականում ջրամատակարարման տևողության նվազագույն ժամկետի ավելացման նկատառումով:

2004 թվականին մոնիթորինգ է իրականացվել նաև Արմավիրի մարզում ջրամատակարարում իրականացնող «Նոր ակունք» ՍՊԸ-ում՝ ճշգրտելով սակագնի տարր կազմող մեծությունները, որոնց հիման վրա հանձնաժողովը սահմանել է սպառողներին վաճառվող խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագները: 2005 թվականին հանձնաժողովը կշարունակի մոնիթորինգն ու վերահսկողությունը ընկերությունում իրականացվող ներդրումային ծրագրերի, ինչպես նաև սպասարկման որակի ցուցանիշների նկատմամբ:

7. Ներդրումային դաշտի կարգավորում

Հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից մեկը կարգավորվող ընկերությունների կողմից հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացված ներդրումային ծրագրերի ուսումնասիրության գործընթացն է: Ուսումնասիրելով ներդրումային ծրագրերը, հանձնաժողովը ընդունում է համապատասխան որոշումներ ապագա սակագների հաշվարկներում դրանց (լրիվ կամ մասնակի) ներառման կամ մերժման վերաբերյալ:

Ներդրումային դաշտը կարգավորելու և ներդրումները խթանելու նպատակով 2004 թվականի մայիսի 12-ի համապատասխան որոշմամբ հանձնաժողովը հաստատել է ներդրումային ծրագրերի համաձայնեցման նոր կարգ՝ նրանում ամրագրելով կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի, ժամանակի հրատապությամբ պայմանավորված՝ անհետաձգելի ներդրումների համաձայնեցման առավել ձկուն մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս.

- ա) խթանել և հստակ ուղղվածություն տալ կարգավորվող համակարգերի հեռանկարային զարգացման տեսանկյունից առաջնահերթ ներդրումներին,
- բ) ներդրումների և սպասվող տնտեսական արդյունքների ազդեցության գնահատման միջոցով կանխատեսել կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումների ազդեցությունը ապագա սակագների վրա,
- գ) հեռանկարային խնդիրների բնույթից ելնելով՝ պարբերաբար կատարելագործել գործող իրավական դաշտն ու կիրառվող տնտեսագիտական մոտեցումները:

Հանձնաժողովը 2004 թվականի հունիսի 18-ի և հուլիսի 24-ի համապատասխան որոշումներով համաձայնություն է տվել առաջին երկու կարճաժամկետ ներդրումային ծրագրերին, որոնք ներկայացվել են էլեկտրաէներգիայի և բնական գազի բաշխման գործունեություն իրականացնող երկու խոշոր ընկերությունների՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ների կողմից:

2004 թվականի ընթացքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն շորջ 6,1 մլրդ դրամ (առանց ավելացված արժեքի հարկի) ներդրումներ կկատարի սպառողների սպասարկման որակի ցուցանիշների բարելավման և լիցենզավորված գործունեության բնականոն ընթացքի ապահովման ուղղությամբ, որի արդյունքում.

- ա) կնվազեն կորուստները,
- բ) մի շարք բնակելի շենքերից դուրս կբերվեն ենթակայանները,
- գ) կնվազեն էլեկտրամատակարարման վերականգնման տևողությունը և էլեկտրամատակարարման անտեղի ընդհատումների քանակը,
- դ) էլեկտրաէներգիայի առկա պահանջարկը բավարարելու նպատակով կտեղակայվեն արտադրական նոր հզորություններ,
- ե) բաշխման ցանցը պատշաճ մակարդակով շահագործելու նպատակով ձեռք կբերվեն մեքենաներ և մեխանիզմներ,
- զ) կարդիականացվի կապի համակարգը:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն մինչև 2004 թվականի նոյեմբերի 1-ը հանձնաժողովի համաձայնեցմանը կներկայացնի ընկերության 2005-2007 թվականների ներդրումային ծրագիրը:

2004 թվականի ընթացքում «Հայրուսգազարդ» ՓԲԸ-ն շուրջ 6,8 մլրդ դրամ (առանց ավելացած արժեքի հարկի) ներդրումներ կուղղի գազի բաշխման և փոխադրման համակարգերում կորուստների նվազեցմանը, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրմանը, առևտրային հաշվառման համակարգի բարելավմանը, գազի բաշխման համակարգի ընդլայնմանն ու նոր բաժանորդների միացմանը, որի արդյունքում՝

- ա) գազի բաշխման և փոխադրման համակարգերում կորուստները կնվազեն շուրջ 11,0 մլն խորանարդ մետրի չափով,
- բ) գազի բաշխման համակարգում կկառուցվեն շուրջ 530 կմ ընդհանուր երկարությամբ նոր գազատարներ՝ հնարավորություն տալով 160 հազար տնային տնտեսությունների միանալու համակարգին:

Ելնելով նախորդ տարիներին գազի բաշխման համակարգին նոր սպառողների միացման տեմպերից և ընկերության տեխնիկական միջոցների հագեցվածությունից, սպասվում է, որ այս տարի գազի բաշխման համակարգին միանալու հնարավորություն ստացած տնային տնտեսություններից 98 հազարը կդառնան բաժանորդներ: Նշված ցուցանիշի ապահովման դեպքում գազի տարեկան սպառումը կաճի շուրջ 100 մլն խորանարդ մետրով, որը գազի սպառման այսօրվա ծավալի 8 տոկոսն է կազմում,

- գ) կկառուցվեն էլեկտրաքիմիական պաշտպանության 68 նոր կայաններ,
- դ) հետազոտություններ կիրականացվեն գազի ստորգետնյա պահեստարան- կայանում, քանի որ պահեստարանի 18 գազահորերից 8-ն այսօր վթարային վիճակում են, որոնցից 4-ում առկա են բարդություններ՝ կապված նախագծային ցուցանիշների փոփոխման հետ: Առկա իրավիճակը թույլ է տալիս պահեստավորել ոչ ավելի, քան 80 մլն խորանարդ մետր բնական գազ, այն դեպքում, երբ պահեստարանի նախագծային ծավալը կազմում է 230 մլն խորանարդ մետր: Նշված հետազոտական աշխատանքների իրականացման արդյունքում հնարավոր կլինի ճշգրտել կայանի հետագա շահագործման և նախագծային ցուցանիշների վերականգնման համար անհրաժեշտ ներդրումների ծավալները,

ե) կբարելավվի սպառողների սպասարկման որակը:

«Հայրուսգազարդ» ՓԲԸ-ն մինչև 2004 թվականի դեկտեմբերի 1-ը հանձնաժողովի համաձայնեցմանը կներկայացնի 2005-2007 թվականների իր

ներդրումային ծրագիրը: Ընկերությունն արդեն նախանշել է ծրագրի հիմնական ուղղությունները և այժմ աշխատանքներ է տանում դրա մշակումն ավարտելու ուղղությամբ: Ծրագրով 2005-2007 թվականների ընթացքում նախատեսվում է՝

- ա) գազի բաշխման և փոխադրման համակարգերում կորուստները նվազեցնել ևս 33 մլն խորանարդ մետրի չափով,
- բ) գազի բաշխման համակարգին միացնել ևս 210 հազար նոր բաժանորդների: Հարկ է նշել, որ նման ցուցանիշների ապահովման դեպքում 2007 թվականի ավարտին բաժանորդների քանակը կհասնի շուրջ 500 հազարի՝ գերազանցելով խորհրդային տարիներին ձեռք բերված բոլոր ցուցանիշները,
- գ) ավելացնել գազի ստորգետնյա պահեստարան-կայանում պահեստավորվող գազի ծավալը,
- դ) ներդրումներ կատարել համակարգի վերազինման ու արդիականացման, սպառողների սպասարկման որակի ցուցանիշների բարելավման ուղղությամբ:

Ներդրումային ծրագրերի, ինչպես նաև շահագործման և պահպանման ծախսերի արդյունավետության բարձրացման նպատակով հանձնաժողովն սկսել է նաև կարգավորվող ընկերությունների համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման կարգերի հաստատման գործընթացը: 2004 թվականի մարտի 26-ին հանձնաժողովը որոշմամբ հաստատել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման կարգը:

Մշակվել և հաստատվել են նաև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ների կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի և գնումների նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվությունների մի շարք ձևեր, որոնք հնարավորություն կտան պարզել կատարված ներդրումների իրական ծավալները, գնահատել դրանց հիմնավորվածությունն ու արդյունավետությունը, հստակեցնել հետագա կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերում առաջադրվելիք խնդիրները և կիրառել գնումների ավելի ճկուն մեխանիզմներ:

Ելնելով ներկայացված խնդիրների համատեքստից, 2005 թվականին նախատեսվում է.

- ա) շարունակել կարգավորվող ընկերությունների երկարաժամկետ և կարճաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության, քննարկման և համաձայնեցման գործընթացը,
- բ) մինչև առաջին կիսամյակի ավարտը ուսումնասիրել և վերլուծել 2004 թվականին փաստացի կատարված ներդրումների ծավալները, դրանց

նպատակայնությունը և արդյունավետությունը՝ գործընթացում ներգրավելով սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և ըստ անհրաժեշտության կազմակերպելով հասարակական լսումներ,

- զ) բոլոր կարգավորվող խոշոր ընկերությունների համար հաստատել ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման կարգեր,
- դ) մշակել և հաստատել կարգավորվող բոլոր խոշոր ընկերությունների ներդրումային ծրագրերի և գնումների նկատմամբ պաշտաճ վերահսկողություն իրականացնելու նպատակով ներդրվող տեղեկատվությունների ձևերը և ստեղծել համալիր տեղեկատվական բազա:

8. Էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի սպառման ծավալների կանխատեսում

Վերլուծելով 2003 թվականին և 2004 թվականի 6 ամիսների ընթացքում արտադրված, հաղորդված և բաշխված էլեկտրական ու ջերմային էներգիայի, ներկրված և բաշխված բնական գազի փաստացի ցուցանիշները, ինչպես նաև հաշվի առնելով կարգավորվող համակարգերի զարգացման միտումները, հանձնաժողովը կազմել է էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի 2004 թվականին սպասվող և 2005 թվականի կանխատեսումային հաշվեկշիռները (աղյուսակներ №№ 1, 2, 3):

Ինչպես երևում է № 1 աղյուսակից, 2005 թվականին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում կանխատեսվում է մուտք գործող էլեկտրական էներգիայի ծավալի աճ ընդամենը 20 մլն կՎտժ-ով: Սակայն գերնորմատիվային կորուստների նվազման արդյունքում բաշխիչ ցանցերում էլեկտրական էներգիայի հաշվեգրված սպառումը կավելանա շուրջ 110.6 մլն կՎտժ-ով (2.8%):

2005 թվականին էլեկտրական էներգիայի ընդհանուր արտադրության մեջ ատոմային էլեկտրակայանի մասնաբաժինը նախատեսվում է 43.7%, ջերմային էլեկտրակայաններինը՝ 27.0% և հիդրոէլեկտրակայաններինը՝ 29.3%:

№ 2 աղյուսակում տրված է բնական գազի 2004-2005 թվականների կանխատեսվող հաշվեկշիռը: 2005 թվականին 2004 թվականի համեմատությամբ նախատեսվում է 110 մլն խմ բնական գազի ներկրման ծավալի աճ (8,3%), ինչը պայմանավորված է հանրապետությունում գազիֆիկացման աշխատանքների ընդլայնմամբ: Էներգետիկ համակարգում 25 մլն խմ-ով գազի սպառման նվազումը պայմանավորված է 2005 թվականին էլեկտրաէներգիայի արտադրության կանխատեսվող նվազմամբ, մասնավորապես, «Հրազդանի ՋԷԿ» փակ

բաժնետիրական ընկերությունում էլեկտրաէներգիայի արտադրության ծավալների կանխատեսվող կրճատմամբ: 2005 թվականին կանխատեսվում է 1312 մլն խմ բնական գազի առաքում սպառողներին, ինչը 111 մլն խմ-ով կամ 9,2%-ով ավելի է 2004 թվականին նախատեսվածից:

№ 3 աղյուսակում տրված է ջերմային էներգիայի 2004-2005 թվականների կանխատեսվող հաշվեկշիռը: 2005 թվականին 2004 թվականի համեմատությամբ նախատեսվում է 60 հազ ԳՋ ջերմային էներգիայի արտադրության ավելացում: Հաջորդ տարի կանխատեսվում է արդյունաբերական կարիքների համար առաքվող ջերմային էներգիայի շուրջ 5% աճ, այսինքն՝ 55 հազ ԳՋ: 2005 թվականին կենտրոնացված ջերմամատակարարման համակարգերում ջերմային էներգիայի արտադրության աճ չի նախատեսվում: Ղա հիմնականում պայմանավորված է ջերմամատակարարման ապակենտրոնացված մասնավոր համակարգերի զարգացման միտումներով:

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ 2004-2005 թթ. ՀԱՇՎԵԿՇԻՈՐ

	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2004 թ. սպասվող	2005 թ. կանխատեսվող
1	Էլեկտրաէներգիայի արտադրություն ^{*)}	մլն կՎտժ	5900	5630
1.1	այդ թվում՝ ՀԱԷԿ	"-	2450	2460
1.2	ՀԷԿ-եր	"-	1850	1650
1.2.1	որից՝ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ (Սևան-Հրազդանյան կասկադ)	"-	480	440
1.2.2	Որոտանի ՀԷԿ	"-	1225	1000
1.2.3	Մասնավոր փոքր ՀԷԿ-եր	"-	145	210
1.3	ԶԷԿ-եր	"-	1600	1520
1.3.1	որից՝ Հրազդանի ԶԷԿ	"-	1225	1070
1.3.2	Երևանի ԶԷԿ	"-	375	450
2	Էլեկտրաէներգիայի ծախսը սեփական կարիքների համար	մլն կՎտժ	360	340
2.1	Նույնը՝ %-ով տող 1-ի նկատմամբ	%	6,1%	6,0%
3	Առաքում կայաններից	մլն կՎտժ	5540	5290
4	Ներհոսք	մլն կՎտժ	170	240
5	Ընդամենը մուտք բարձր լարման էլեկտրացանցեր	մլն կՎտժ	5710	5530
6	Կորուստները բարձր լարման էլեկտրացանցերում	մլն կՎտժ	150	140
6.1	Նույնը՝ %-ով տող 5-ի նկատմամբ	%	2,63%	2,53%
7	Արտահոսք	մլն կՎտժ	880	690
8	Մուտք «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	մլն կՎտժ	4680	4700
9	Կորուստները բաշխիչ ցանցերում	մլն կՎտժ	796	705
9.1	Նույնը՝ %-ով տող 8-ի նկատմամբ	%	17,0%	15,0%
10	Ներքին սպառում	մլն կՎտժ	3884,4	3995

^{*)} 2005 թվականին էլեկտրաէներգիայի արտադրության նվազումը պայմանավորված է 2004 թվականին «Ագարակ» 220 կՎ փոխանցատման կետի շինարարության համար Իրանի Իսլամական Հանրապետության «Սանիր» ընկերության կողմից «Հայէներգո» ՓԲԸ-ին տրամադրված փոխառության մարմամբ և «Սյունիք Կենտրոն» 220 կՎ էլեկտրահաղորդման գծի կառուցման դիմաց Իրանի Իսլամական Հանրապետություն էլեկտրաէներգիայի արտահանմամբ:

ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ 2004-2005 թթ. ՀԱՇՎԵԿՇԻՈՐ

	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2004 թ. սպասվող	2005 թ. կանխատեսվող
1	Բնական գազի ներկրում	մլն ն մ ³	1320	1430
2	Տեխնոլոգիական կորուստները գազի համակարգում	մլն ն մ ³	112	108
2.1	Նույնը՝ %-ով տող 1-ի նկատմամբ	%	8,5%	7,6%
3	Գազի ծախսը սեփական կարիքների համար	մլն ն մ ³	7	10
3.1	Նույնը՝ %-ով տող 1-ի նկատմամբ	%	0,5%	0,7%
4	Մղվել է ստորգետնյա պահեստարաններ	մլն ն մ ³	50	50
5	Արտանդվել է պահեստարաններից	"-"	50	50
6	Բնական գազի առաքումը սպառողներին որից՝	"-"	1201	1312
6.1	<i>Էներգետիկ համակարգ</i>	"-"	540	515
6.2	<i>Արդյունաբերություն</i>	"-"	250	300
6.3	<i>Բյուջետային կազմակերպություններ</i>	"-"	20	22
6.4	<i>Բնակչություն</i>	"-"	210	250
6.5	<i>Ջեռուցման համակարգ</i>	"-"	9	9
6.6	<i>Այլ սպառողներ</i>	"-"	172	216

ԶԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ 2004-2005 թթ. ՀԱՇՎԵԿՇԻՈՐ

	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2004 թ. սպասվող	2005 թ. կանխատեսվող
1	Զերմային էներգիայի արտադրությունը, ընդամենը	հազ ԳՋ	1890	1950
1.1	այդ թվում՝ ՋԷԿ-երում	"-"	1655	1715
1.2	կաթսայատներում	"-"	235	235
2	Զերմային էներգիայի կորուստները	հազ ԳՋ	265	270
2.1	Նույնը՝ %-ով տող 1-ի նկատմամբ	%	14,0%	13,8%
3	Զերմային էներգիայի օգտակար առաքումը, այդ թվում՝	հազ ԳՋ	1625	1680
3.1	<i>Կենտրոնացված ջեռուցման համար որից՝</i>	"-"	510	510
3.1.1	<i>ՋԷԿ-երից</i>	"-"	300	300
3.1.2	<i>Կաթսայատներից</i>	"-"	210	210
3.2	<i>Արդյունաբերական կարիքների համար</i>	"-"	1115	1170

9. Սպառողների հետ տարվող աշխատանքներ

Ղեկավարվելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգավորման հիմնական սկզբունքներով, հանձնաժողովը մեծ նշանակություն է տալիս սպառողների և կարգավորվող անձանց նկատմամբ խտրականության բացառման, սպառողների և կարգավորվող անձանց շահերի հավասարակշռման խնդիրներին:

Լիցենզավորված անձանց հետ պարբերաբար քննարկումներ են կազմակերպվում սպառողների հարցադրումների, բողոքների, ինչպես նաև սպառողներին ներկայացված վճարման հաշիվների վիճարկման վերաբերյալ:

Հանձնաժողովը 2004 թվականի սկզբից մինչև սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում ստացել է 74 գրավոր բողոք, «հրատապ հեռախոսով» և քաղաքացիների ընդունելության արդյունքում՝ 244 հարցադրում և բողոք, որոնցում բարձրացված խնդիրներին տրվել են համապատասխան ընթացք կամ տեղեկատվություն: Շարունակվելու է սպառողների շրջանում բացատրական աշխատանքների իրականացումը՝ իրենց իրավունքներին, ինչպես նաև «Էներգետիկայի մասին», «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքներին և դրանցից բխող իրավական ակտերին ծանոթացնելու ուղղությամբ:

2005 թվականին սպառողների շրջանում իրավական գիտելիքների տարածման, հանրային ծառայությունների ոլորտը կարգավորող ՀՀ օրենքներին և իրավական ակտերին սպառողներին իրազեկելու նպատակով հանձնաժողովը ՀայTV հեռուստաընկերության հետ համատեղ շարունակելու է կազմակերպել հեռուստատեսային հաղորդումների շարք:

,Հայաստանի էլեկտրական ցանցերե ՓԲԸ-ի հետ համատեղ, PA Consulting Group-ը խորհրդատվական ընկերության և սպառողների շահերի պաշտպանության միության աջակցությամբ նախապատրաստվել և տպագրման փուլում է էլեկտրական էներգիա սպառողի և մատակարարի իրավունքներն ու պարտականությունները պարզաբանող «Սպառողի ուղեցույց» բրոշյուրը, որը նախատեսվում է անհատույց տրամադրել սպառողներին:

2005 թվականին, միջոցների առկայության դեպքում, նախատեսվում է հրապարակել նույնանման բրոշյուրներ գազամատակարարման և ջրամատակարարման ոլորտների վերաբերյալ:

2004 թվականին մարզերի բնակչության հետ կապը բարելավելու, տեղերում էներգամատակարարման, գազամատակարարման և ջրամատակարարման

ուղորտներին առնչվող խնդիրները կարգավորելու նպատակով ներդրվել է սպառողների դիմումների, առաջարկությունների ընդունման, ինչպես նաև լիցենզավորված անձանց և այլ կազմակերպությունների հետ էլեկտրոնային փոստով հաղորդակցվելու կարգը: 2005 թվականին մարզպետարանների հետ համատեղ միջոցառումներ կիրականացվեն կապի այս ձևը սպառողներին ավելի հասու դարձնելու ուղղությամբ:

10. Չանգվածային լրատվամիջոցների , հասարակական կազմակերպությունների հետ տարվող աշխատանքներ

2005 թվականին հանձնաժողովի մամուլի ծառայությունը զանգվածային լրատվամիջոցների հետ աշխատանքներում ծրագրում է զարգացնել իր գործունեության հրապարակայնության և թափանցիկության սկզբունքները: Հանրությանն իրազեկման, հետադարձ կապի ապահովման նպատակով նախատեսվում է հանձնաժողովի գործունեության մասին հաղորդվող տեղեկատվության, հարցազրույցների, մամուլի ասուլիսների պարբերականության հաճախացում:

Նպատակ ունենալով ապահովել հանձնաժողովի գործունեության թափանցիկությունը և անմիջական տեղեկատվություն ստանալու նպատակով լրագրողների համար բարենպաստ պայմանների ստեղծումը, 2004 թվականի ապրիլին հանձնաժողովի որոշմամբ հաստատվել է մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչների հավատարմագրման կարգը: Հանձնաժողովի գործունեությանը և սպառողների շահերի պաշտպանությանը վերաբերող խնդիրներն պարզաբանումներ տալու նպատակով նախատեսվում է հավատարմագրված լրագրողների համար կազմակերպել սեմինարներ և համատեղ քննարկումներ:

Մամուլի ամենօրյա վերլուծության արդյունքում շարունակվելու են նրանում բարձրացրած հարցերի, հիմնախնդիրների շուրջ հանձնաժողովի անդամների, աշխատակազմի աշխատակիցների մասնագիտական պարզաբանումները զանգվածային լրատվամիջոցներով: Լրագրողների, համապատասխան մարմինների մասնակցությամբ կազմակերպվելու են հասարակական լսումներ, բանավեճ-քննարկումներ: Չանգվածային լրատվամիջոցներով նախատեսվում են ճանաչողական բնույթի հաղորդումների կազմակերպում, հանրության հետ հետադարձ կապի ակտիվացում` ուղիղ հեռուստառադիոթերթերի միջոցով:

Նախատեսվում է 2005 թվականին առավել արդյունավետ դարձնել համագործակցությունը հասարակական կազմակերպությունների հետ: Հանրության համար հետաքրքրություն ներկայացնող որոշումների ընդունումից առաջ

շահագրգիռ հասարակական կազմակերպություններին, ինչպես նախկինում, առաջիկայում ևս կտրամադրվեն անհրաժեշտ փաստաթղթեր, հնարավորություն կընձեռվի դիտողություններով, առաջարկություններով հանդես գալու հանձնաժողովի առջև: Փաստաթղթային լուրջ հիմնավորումները իրենց արտացոլումը կգտնեն հանձնաժողովի որոշումներում: Հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ կշարունակվեն համատեղ քննարկումները, կկազմակերպվեն կլոր սեղաններ, համատեղ ասուլիսներ:

Ջանգվածային լրատվամիջոցների հետ աշխատանքը առավել արդյունավետ դարձնելու նպատակով առավելագույնս կօգտագործվեն էլեկտրոնային փոստի հնարավորությունները:

Հանձնաժողովի գործունեության թափանցիկության և հրապարակայնության ապահովումը նախատեսվում է իրականացնել հավաստի, օպերատիվ տեղեկատվության միջոցով հասարակության իրազեկման, մամլո հաղորդագրությունների, տարեկան ամփոփ հաշվետվությունների հրապարակման ճանապարհով:

2005 թվականին ծրագրվում է միջպետական համանման կառույցների մամուլի ծառայություններին ինտեգրման գործընթացի ակտիվացում. փոխայցելություններ, փորձի փոխանակում, համատեղ ծրագրերի մշակում:

Պարբերաբար կթարմացվեն ինտերնետային էջի նյութերը՝ կտեղադրվեն հանձնաժողովի ընդունած նոր որոշումները, տնտեսավարող սուբյեկտների լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունները, ինչպես նաև հանձնաժողովի գործունեության վերաբերյալ մամուլում հրապարակված նյութերը:

11. Համագործակցություն

Հանձնաժողովը, իրեն վերապահված իրավասությունների և պարտականությունների շրջանակների ընդլայնմամբ պայմանավորված, անհրաժեշտ է համարում միջազգային փորձի ուսումնասիրման, մասնագետների ուսուցման ու վերապատրաստման գործընթացները և այդ առումով 2005 թվականին նույնպես կշարունակի գործակցությունը միջազգային կազմակերպությունների և այլ երկրների կարգավորող մարմինների հետ:

Լինելով Կենտրոնական, Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի 19 երկրների կարգավորող հանձնաժողովերի ընկերակցության (ERRA) անդամ, հանձնաժողովը 2005 թվականին կմասնակցի ընկերակցության սակագնային, լիցենզավորման, իրավաբանական կոմիտեների նիստերին, ինչպես նաև տարեկան և ներդրումային հարցերին վերաբերող համաժողովներին:

2004 թվականին կշարունակվի մասնակցությունը ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (USAID) և Կրթությամբ զարգացման ակադեմիայի (AED) կողմից կազմակերպվող սեմինարներին: Այժմ հանձնաժողովի մասնագետները մասնակցում են և 2005 թվականին կշարունակեն մասնակցել ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության Առևտրային իրավունքի և տնտեսական կարգավորման ծրագրի շրջանակներում ,Bearing Point-ի և ,PA Consulting Group-ի խորհրդատվական ընկերությունների կազմակերպած սեմինարներին:

2005 թվականին կշարունակվեն հանձնաժողովի կապերը ԱՄՆ-ի Քենտուկի նահանգի Հասարակական ծառայությունների հանձնաժողովի հետ՝ հաշվի առնելով կարգավորման բնագավառում այդ կառույցի բազմամյա փորձը:

Նկատի ունենալով, որ ,Էլեկտրոնային հաղորդակցության մասին ՀՀ օրենքի ընդունումից և սահմանված կարգով գործողության մեջ դնելուց հետո հանձնաժողովին է վերապահվելու հեռահաղորդակցության բնագավառի կարգավորման գործառույթը, հանձնաժողովը սերտորեն համագործակցում է հեռահաղորդակցության ոլորտի ,Bearing Point-ի խորհրդատվական ընկերության հետ: Հանձնաժողովի մասնագետների որակավորումն այդ ոլորտում բարձրացնելու նպատակով կազմակերպվել է և նախատեսվում է 2005 թվականին շարունակել դասընթացների շարք:

2005 թվականին նախատեսվում է նման համագործակցություն նաև ջրային համակարգի խորհրդատվական ընկերությունների հետ:

Երևանի ՋԷԿ-ի վերակառուցման նախագծի վարկային ֆինանսավորման պայմանների պարզաբանման նպատակով 2005 թվականի ընթացքում կշարունակվեն հանձնաժողովի սակագնային քաղաքականության քննարկումները Միջազգային համագործակցության Ճապոնական բանկի (JBIC) պատվիրակության հետ:

Եվրոպական հանձնաժողովի ,Տեխնիկական աջակցություն Հայաստանին, Ադրբեջանին, Վրաստանին և Մոլդովային՝ կլիմայի համընդհանուր փոփոխության իրենց պարտավորությունների կատարման համարե ծրագրի շրջանակներում հանձնաժողովը կմասնակցի մաքուր զարգացման մեխանիզմով նախագծերի մշակման, իրականացման և վերահսկման աշխատանքներին, որոնք համակարգվում են ՀՀ բնապահպանության նախարարության կողմից:

2005 թվականին հանձնաժողովը շարունակելու է համագործակցությունը Էներգետիկական խարտիայի քարտուղարության հետ՝ էներգետիկայի բնագավառի վերակառուցման, մրցակցային շուկաների ձևավորման և այլ հարցերում: